ԴԵՊԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՖԱՆԻՇՆԵՐ

iACD
International Association for Community Development
Association Internationale de Développement et D'Action Communautaires

2018 65TH ANNIVERSARY YEAR

WITHOUT COMMUNITY DEVELOPMENT
THERE IS NO SUSTAINABLE DEVELOPMENT

ՆԱԽԱԲԱՆ

Այս ուղեցույցը ներկայացնում է համայնքի զարգացման պրակտիկայի միջազգային չափանիշների հիմնադրույթները: Այն լուսաբանում է համայնքի զարգացման ընդհանուր փորձի առանցքային թեմաները և ուղղությունները՝ անկախ այն հանգամանքից, թե աշխարհի որ մասում է կիրառվում այդ փորձը: Ուղեցույցում պարզաբանվում են համայնքի զարգացման մասնագիտական փորձի նպատակը, հիմնարար արժեքներն ու մասնագետների կողմից կիրառվող հիմնական մեթոդները:

2016 թ. Համայնքների զարգացման միջազգային ասոցիացիայի (IACD) տարեկան ընդհանուր ժողովում ընդունվեց համայնքի զարգացման նոր սահմանում: IACD-ի ուսուցման և մասնագիտական զարգացման կոմիտեն նախաձեռնեց համայնքների զարգացման փորձով զբաղվողների համար գործնական ուղեցույցի պատրաստման աշխատանքը: Նույն թվականի հոկտեմբերին այդ աշխատանքի մասին տեղեկացվեցին IACD- ի բոլոր մասնակիցները: Տվյալ ծրագիրը խթանելու նպատակով՝ IACD-ի ղեկավար մարմինը համաձայնեցրել է աշխատանքը Շոտլանդիայի Համայնքների զարգացման և ուսուցանման ստանդարտների խորհրդի հետ (CLDSC2): 2014թ. Գլազգոյում միջազգային համայնքի զարգացման համաժողով կազմակերպելիս CLDSC- ն արդեն IACD- ի գործընկերն էր: Բացի այդ, CLDSC- ը շոտլանդական մասնագիտացված գործակալություն է, որը համայնքների զարգացման չափանիշների մշակման ոլորտի1 ավելի քան 30 տարվա փորձ ունի: Ապագա ուղեցույցի նախագիծը կազմելու համար ստեղծվեց համատեղ աշխատանքային խումբ: 2016 թ. նոյեմբերին մասնակիցների քննարկմանն ուղարկվեց ուղեցույցի առաջին տարբերակը՝ հիմնված որոշ երկրների համայնքային զարգացման ազգային չափանիշների մշակման փորձի վրա:

Համայնքների զարգացման ընդհանուր միջազգային չափանիշների ուղեցույցի նախագիծը պատրաստելու նպատակով աշխատանքային խումբը հավաքվել է մի քանի անգամ: Ապա նախագիծն ուղարկվել է IACD-ի բոլոր անդամներին՝ չորսամսյա քննարկման, որն ավարտվեց 2018թ. մարտի 31-ին: Սա ծրագրի նախապատմությունն է: IACD-ը չափազանց կարևորում է համայնքների զարգացման գործընթացի մասնակից տարբեր շահագրգիռ կողմերի՝ պրակտիկ-մասնագետների, ուսուցիչների, գործատուների, հովանավորների, քաղաքական խորհրդատուների և այլոց ներգրավումը՝ ինչ է համայնքի զարգացման պրակտիկա ընդհանուր միջազգային հասկացություն ձևավորելու համար:

Այս միջազգային չափանիշները մենք դիտարկում ենք որպես ելակետային դրույթներ, որոնք կարող են հարմարեցվել ինչպես մեր մասնակիցների ամենատարբեր աշխատանքային պայմաններին, այնպես էլ այլ շահագրգիռ անձանց տարբեր երկրներից:

1. Համայնքային ուսուցում և զարգացում
2. CLDSC — ը Շոտլանդիայի ստանդարտների հաստատման և վերապատրաստման դասընթացներ կազմակերպող մարմինն է: Սկզբում այս խնդրով զբաղվում էր Շոտլանդիայի Հանրային կրթության խորհուրդը, այնուհետև տվյալ արտոնությունը տրվեց CLDSC-ին:

Աշխարհի տարբեր երկրներից՝ Չինաստանից և Հարավային Աֆրիկայից մինչև Կանադա, Ավստրալիա և Պորտուգալիա, ԱՄՆ-ից և Նոր Զելանդիայից մինչև Մեծ Բրիտանիա և Քենիա, մեր ասոցիացիայի մասնակիցներից ուղեցույցի նախագծի վերաբերյալ արձագանքներ ենք ստացել: Սա, հիրավի, համաշխարհային համատեղ աշխատանք է, և մենք շնորհակալություն ենք հայտնում թե՛ հավանության և թե՛ քննադատության համար: Որոշ պատասխաններ մենք ստացել ենք մասնավոր անձանցից, սակայն մեծ մասն ազգային տարածաշրջանային միություններից են ստացվել: Ակնհայտ էր, թե տարածաշրջանային մարմինները ինչքան երկար ժամանակ են ծախսել արձագանքի նախապատրաստման համար: Պատասխանների հիմնական մասը վերաբերում էր ուղեցույցի նախագծի կոնկրետ առաջարկների և պարագրաֆների հատուկ ձևակերպմանը, տեքստի որևէ մասը փոփոխելու, հեռացնելու կամ լրացնելու առաջարկություններին, բայց, ընդհանուր առմամբ, մեր առաջարկությունները հստակ հավանության են արժանացել: Պատասխանողների մեծ մասը սատարել է IACD-ի այս նախաձեռնությունը: Սակայն, ասոցիացիայի որոշ անդամներ մտահոգված էին, որ, հրապարակելով նման ուղեցույց և հաշվի առնելով ասոցիացիայի կողմից ավելի վաղ տրված սահմանումը, թե ինչ է համայնքների զարգացումը, ըստ էության IACD-ը բացառում է չվարձատրվող մասնագետներին և հասարակական ակտիվիստներին մեր ընկալումներից: Այս դեպքում հնարավոր է ընկնել ծուղակի մեջ, որի մեջ շատերն են ընկել՝ ստեղծելով փակ մասնագիտություն: Սա չափազանց կարևոր քննադատություն է, և մենք աշխատում ենք ուղղել այդ խնդիրները: Չէ որ IACD-ն ընդգծում է իր հստակ ձգտումը՝ լինել բաց կազմակերպություն: Մենք միշտ ձգտել ենք և ձգտում ենք աշխատել հատկապես այս ձևաչափով:

IACD - ը հանգամանորեն է դիտարկում այն հարցը, թե ո՞ւմ կարելի է համարել համայնքի զարգացման պրակտիկ-մասնագետ: Թեև ակնհայտ է, որ համայնքի զարգացման մասնագետ լինելը նույնը չէ, ինչ քաղաքացիական առաջնորդ, ակտիվիստ կամ շահագրգիռ քաղաքացի լինելը: Համայնքների զարգացման պրակտիկ-մասնագետները կարող են և հաճախ էլ՝ հենց չվարձատրվող անձինք են լինում: Չնայած, որ IACD-ը արհմիություն չէ, կցանկանայինք ընդգծել, որ ինչպես մեր համընդհանուր փորձն է ցույց տալիս, համայնքի զարգացման գործընթացը բարդ և դժվարին աշխատանք է: Հետևաբար, ընդհանուր առմամբ մենք կցանկանայինք համայնքի զարգացման մասնագետներին տեսնել իրենց աշխատանքի համար ըստ արժանվույն վարձատրված և լավ պայմաններում աշխատելիս:

Մենք նաև շահագրգռված ենք, որ համայնքի զարգացման բոլոր պրակտիկ-մասնագետները որակյալ կրթություն ստանալու հնարավորություն ունենան ուսումնական կամ մասնագիտական վերաորակավորման դասընթացների միջոցով: Մենք հետևողականորեն կոչ ենք անում կրթական կազմակերպություններին՝ լիարժեք ճանաչել և հավատարմագրել պրակտիկ-մասնագետների նախորդ փորձը: Կարևոր է ապահովել ավելի մեծ հասանելիություն բնիկ ժողովուրդներից և աշխատանքային խմբերից ելած այն մարդկանց համար, որոնք իրենց համայնքում առաջնորդ կամ ակտիվիստ են եղել: Ըստ մեր հաշվարկների՝ աշխարհում կա համայնքի զարգացմանը նվիրված շուրջ հազար ուսանողական դասընթաց (տես.՝ Գլոբալ համաշխարհային տեսածիրը): Համայնքների զարգացման պրակտիկայի համար այս դասընթացների մշակման գործում բարձր ստանդարտների խթանումը համապատասխանում է ինչպես համայնքային զարգացման մասնագետների, այնպես էլ հենց համայնքների շահերին:

IACD - ի սահմանման համաձայն՝ համայնքների զարգացումը մենք դիտարկում ենք և՛ որպես գործնական փորձի վրա հիմնված մասնագիտություն, և՛ որպես ակադեմիական հայեցակարգ: Համայնքի զարգացում իրականացնելը հաճախ ուղղակի մարտահրավեր է: Սա բարդ, երբեմն վտանգավոր աշխատանք է: Եվ, այդ իսկ պատճառով պրակտիկ-մասնագետներին անհարժեշտ են քաղաքական, հասարակական, մշակույթային, տնտեսական և բնապահպանական բնագավառների գիտելիքներ: Այդ գիտելիքները պետք է նրանց տան մարդկային կյանքի իրական փոխհարաբերությունների ավելի լայն ըմբռնում սոցիալական, քաղաքական, մշակութային, տնտեսական և բնապահպանական համատեքստում: Միայն այս կերպ համայնքի զարգացման մասնագետները կկարողանան իրագործել այնպիսի փոփոխություններ, որոնք հնարավորություն կտան մարդկանց ընդլայնել իրենց իրավունքներն ու հնարավորությունները: Պրակտիկ-մասնագետները պետք է լինեն արդյունավետ կազմակերպիչներ և ուսուցիչներ, լինեն նրբազգաց, տիրապետեն հեռահաղորդակցման նորություններին, ռեսուրսներից օգտվելու հնարավորության գիտելիքին: Եվ նրանք պետք ըմբռնեն, որ իրենց գործունեության հիմնասյունը սոցիալական և բնապահպանական արդարության, ժողովրդավարական մասնակցության համընդհանուր արժեքներն են:

Մենք արդեն խոսել ենք որոշ երկրներում ամենաբարձր մակարդակի ուսումնական հաստատությունների կողմից համայնքի զարգացումն ուսուցանելու ընթացքը չափից դուրս տեսականացնելու մասին3: Անհրաժեշտ է պահպանել խելամիտ հավասարակշռություն, որը կհամադրի մեր ոլորտի հիմնարար գիտելիքների ստացումը պրակտիկ գործն իրականացնելու համար անհրաժեշտ հմտությունների և փորձի հետ: Իրականում վերափոխիչ լինելու համար, համայնքի զարգացման պրակտիկան մեր բանականության, ձեռքերի և սրտի կարիքն ունի, ինչպես նաև փորձով և հետազոտություններով ամրապնդված գիտելիքների կազմակերպված ծավալի:

3. http://www.iacdglobal.org/2017/09/18/are-we-now-ready-for-an-international-forum-for-professional-community-development-educators/

Համայնքի զարգացման պրակտիկայի ընդհանուր միջազգային չափանիշները հրապարակելով՝ մենք գիտակցում ենք «մասնագիտություն» հասկացությունը պարզաբանելու անհրաժեշտությունը: Ուղեցույցի նախագծի պատասխաններից մեկը լուսաբանում է այս պահը, ուստի մենք այն ներկայացնում ենք այստեղ. *«Թեև պրակտիկայի ստանդարտների վերաբերյալ փաստաթղթում չկա պրոֆեսիոնալիզմի սահմանում՝ որպես այդպիսին, այնուամենայնիվ ենթադրվում է (հղում կատարելով համանման մասնագիտական հայեցակարգերի հետ կապված աշխատանքներին, ինչպիսիք են սոցիալական աշխատանքը, բժշկական դիսցիպլինները, քաղաքաշինությունը և ճարտարապետությունը, ինչպես նաև պրակտիկայի ստանդարտները մշակելու անհրաժեշտության հետ կապված), որ փաստաթղթում օգտագործվող «արհեստավարժ մասնագետ» տերմինը վերաբերում է փորձագիտական գիտելիքներ և հմտություններ ունեցող մարդկանց, որոնք համայնքի զարգացման պրակտիկ-մասնագետներ են, որոնք աշխատում են հաստատված պրակտիկայի ստանդարտների շրջանակներում՝ մասնագիտական կազմակերպության վերահսկողության ներքո: Բնական է, կան «արհեստավարժ մասնագետ» տերմինի այլ սահմանումներ և.ս: Օրինակ՝հարգալից, նրբանկատ և բանիմաց անձի նկատմամբ, իսկ համայնքների զարգացման դեպքում՝ ոչ թե արտաքին փորձագետների, այլ համայնքի կողմից հաստատված իրավասությունների շրջանակում: Սակայն տվյալ մոտեցումը պրոֆեսիոնալիզմ հասկացությանը փաստաթղթում ձևակերպված չէ:»*

Այս մեկնաբանությունը տեղին է, և, պատասխանելով դրան, մենք ընդգծում ենք, որ IACD-ն այս տերմինն օգտագործում է երկու իմաստով էլ: Եվ հենց այդ պատճառով, մենք հանգեցինք եզրահանգման, որ համայնքի զարգացումը հանդիսանում է «մասնագիտությունների հնարավորություններն ընդլայնող»: Դա էլ որոշում է պրակտիկ մասնագետի և այն մարդկանց փոխհարաբերությունների բնույթը, որոնց հետ մենք աշխատում ենք (որոնք կարող են լինել նաև մեր գործատուները): Մարդկանց էներգիան, ինչպես նաև նրանց իրավունքների և հնարավորությունների ընդլայնումը պրակտիկ- մասնագետների և համայնքային զարգացմամբ զբաղվող կազմակերպությունների գործունեության հիմքն է: Պիտի խոստովանենք, որ համայնքների զարգացման ոչ բոլոր փորձերն են հիմնված այդ սկզբունքների վրա: Երբեմն դա, անշուշտ, բացասական հետևանքներ է ունեցել, քանի որ ոտնահարել է առանց այն էլ խոցելի համայնքների իրավունքները: Ահա թե ինչու մենք, որպես ասոցիացիա, ցանկանում ենք բացարձակապես պարզ և հստակ սահմանել համայնքային զարգացման սկզբունքները: Հուսով ենք, մեր մասնակիցները կիսում են այս տեսակետը և կստարեն դրա առաջխաղացմանը:

Մենք նաև ընդունում ենք նրանց շահերը, ովքեր իրականում ձայնի իրավունք ունեն համայնքի զարգացման մեր փորձի կատարելագործման առումով. մեր գործընկերները՝ (վարձատրվող և չվարձատրվող), գործատուները և հովանավորները, մասնագիտական չափանիշներին սատարող ազգային և տարածաշրջանային գործակալությունները և համայնքները, որոնց հետ մենք աշխատում ենք:

Ակնհայտ է, որ այդ շահագրգիռ կողմերի ձայները ներկայացնող ազգային մարմինները պետք է պատասխանատվություն կրեն և՛ ազգային ստանդարտների ներդաշնակեցման, և՛ այդ չափանիշների ներդրմանը գործնական օժանդակության և մշտադիտարկման համար, ինչպես նաև համայնքների զարգացման դասընթացների և վերապատրաստման դասընթացների կազմակերպմանն աջակցության համար: IACD- ի դերը փոխգործակցության զարգացումն է, ազգային հասարակական կազմակերպությունների, ղեկավար մարմինների և ստեղծագործական միջազգային հանրությունների մասնագետների միջև գաղափարների և մոտեցումների փոխանակման խրախուսումը: Սա այն է, ինչին մենք մշտապես ձգտում ենք: Այնուամենայնիվ, նման ազգային կառույցներ և ազգային ստանդարտներ ունեն միայն մի քանի երկրներ, որոնցից մեկը Շոտլանդիան է, որտեղ էլ այժմ շ IACD- ի գրասենյակն է:

IACD Ուսուցման և մասնագիտական զարգացման հանձնաժողովի այս զեկույցը մեր անդամներին և միջազգային հանրությանը մենք ներկայացնում ենք որպես ուղեցույց պրակտիկ-մասնագետների, համայնքների, կրթական և ուսուցողական կազմակերպությունների, գործատուների, համայնքային զարգացման տարածաշրջանային ազգային ասոցիացիաների ու ազգային կառավարությունների համար, որը հնարավորություն կտա կատարելագործել համայնքների զարգացման փորձի որակը, թափանցիկությունը և հաշվետվողականությունը, ինչպես նաև այդ փորձի պահպանմանն ուղղված հիմնական և շարունակական մասնագիտական զարգացման որակը:

Պոլ Լաշապել

Համայնքների զարգացման միջազգային ասոցիացիայի նախագահ

Ջոն Ստենսֆիլդ

IACD-ի Ուսուցման և մասնագիտական զարգացման հանձնաժողովի նախագահ

ՀԻՄՆԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

2016-ին IACD-ի Խորհուրդը և Տարեկան ընդհանուր ժողովը հաստատեցին համայնքի զարգացման հետևյալ համընդհանուր սահմանումը.

«Համայնքի զարգացումը և՝ գործնական փորձի վրա հիմնված մասնագիտություն է, և՛ ակադեմիական հայեցակարգ է, որը նպաստում է ժողովրդավարության, ընդունված նորմերի, կայուն զարգացման, տնտեսական հնարավորությունների, հավասարության և սոցիալական արդարության իրականացմանը կազմակերպական աշխատանքների, կրթության, համայնքներում մարդկանց իրավունքների ու հնարավորությունների ընդլայնման միջոցով՝ լինի դա միավորում ըստ բնակավայրի, ինքնության, շահերի, գյուղական, թե քաղաքային շրջաններում»:

Համայնքների զարգացման մի շարք ազգային ասոցիացիաներ նույնպես ընդունել են այս սահմանումը կամ քննարկում են այն ընդունելու հնարավորությունը: Սա խոսում է այն մասին, որ ամրապնդվում է մեր անդամների փոխըմբռնումը, և IACD- ի սահմանումը համահունչ է պրակտիկայի իրողություններին, օգնում է հասնել համընդհանուր ըմբռնմանը՝ ինչ է համայնքի զարգացման պրակտիկան:

IACD- ի սահմանումը հիմնվում է համայնքի զարգացման ընդլայնված հասկացության վրա՝ընդունված ՄԱԿ-ի կողմից 1950-ականներին (երբ ստեղծվեց մեր ասոցիացիան): Մենք պաշտպանում ենք այդ տարիներին արված ընդհանուր հայտարարությունը, որ համայնքի զարգացումը «գործընթաց է, որում համայնքի անդամները միավորվում են համատեղ գործողություններ իրականացնելու և ընդհանուր հիմնախնդիրները լուծելու համար»: 1950-ական թվականներից ի վեր, երբ ՄԱԿ-ն սկսեց օգտագործել այս տերմինը, այն նաև սկսեց նկարագրել համայնքային զարգացումը որպես «տեխնիկական աջակցության ծրագրերի ներկայացման և միջգերատեսչական համակարգման գործընթաց ..., ինչի միջոցով զարգանում կամ զարգացվում են թույլ զարգացած ոլորտները»: Ամենասկզբից ՄԱԿ-ը, ազգային կառավարությունները և այլ կազմակերպությունները, ինչպես նաև IACD- ը, գիտակցում էին, որ համայնքի զարգացումը ենթադրում է կոլեկտիվ համայնքի գործողությունների փոխկապակցում՝այդպիսի համայնքներին տրամադրվող տեխնիկական կամ այլ տիպի օգնության և օժանդակության միջոցով:

Մեր 65-ամյակի կապակցությամբ 2018 թ. սկզբին IACD- ի Practice Insights ամսագրի հատուկ համար լույս տեսավ4: Այդ ամսագրի մեջ ներկայացված են վերջին 60 տարիների ընթացքում մեր շարժման մեջ վճռական դեր խաղացած մարդիկ և կարևոր իրադարձությունները: Մեր փորձի և աշխարհընկալման ձևավորման վրա շատ մարդիկ են ազդեցություն ունեցել: Ինչպես գրել ենք ամսագրում.«վերջին 60 տարիների ընթացքում տասնյակ հազարավոր համայնքների զարգացման մասնագետներ նվիրվել են համայնքի հզորացմանը, նպաստել կոլեկտիվ գործողություններին, մարդկանց կյանքի բարելավմանը և հոգացել մեր Երկիր մոլորակի մասին: Նրանց աշխատանքը ոչ միայն խոսում է աշխարհի անպաշտպան մարդկանց որոշ խնդիրների մասին, այլ նաև տրամադրում է իրավիճակը փոխելու միջոցներ»:

IACD- ի ամսագրի այս հոբելյանական համարում մենք ցույց ենք տվել, որ համայնքների զարգացումը քաղաքական տեսանկյունից միշտ հակասական փորձ է եղել: Թե պահպանողականները, թե արմատականներն օգտագործել են այս եզրույթը, բայց երբեմն շատ տարբեր նպատակներով: Համայնքների զարգացման մասնագետները, համայնքների զարգացման վերաբերյալ հազարավոր գիտական աշխատությունները, հետազոտական գործիքակազմերը և հրապարակումները համայնքների զարգացման մասին ցույց են տվել և շարունակում են ցույց տալ ակտիվ քննադատական ռեֆլեքսիա : Այս փաստը գրեթե կայուն մասնագիտական առողջության նշան է: Հենց այս պրակտիկ-մասնագետներն են նաև ձևավորում հիմնարար արժեքների մեր պատկերացումը: Չնայած նրան, որ համայնքային զարգացումը չեզոք գործընթաց չէ թե քաղաքական, թե արժեքային տեսանկյունից, մենք հստակ հրապարակային հայտարարություն ենք արել մեր արժեքային տեսլականի մասին: Եվ հենց այդ արժեքներն են դրված IACD 2016- ի սահմանման և այս փաստաթղթի հիմքում:

IACD- ի՝ համայնքի զարգացումը սահմանող և բացատրող սեփական հայտարարությունը հրապարակելու որոշումը նաև հետազոտության (IACD 2015 թ. Համաշխարհային համայնքային զարգացման ուսուցման ծրագրերի վերլուծական ուսումնասիրություն) արդյունքն է: Այն ցույց տվեց, որ համայնքային զարգացումը իսկապես շատ լայնորեն և ազատորեն է մեկնաբանվում տարբեր երկրներում տարբեր կրթական ինստիտուտների, գործատուների և մասնագետների կողմից: Մենք հայտնաբերեցինք հարյուրավոր բուհական վերապատրաստման ծրագրեր, որոնք ներառում են համայնքի զարգացման ուսուցումը՝ որպես բակալավրի դասընթացի մի մաս5: Դասընթացներից որոշները, ինչպես պարզվեց, հենց համայնքի զարգացման մասնագետներ են պատրաստում: Մյուսները կապում են համայնքի զարգացումը առողջապահության, սոցիալական, գյուղական, տնտեսական կամ միջազգային զարգացման դիսցիպլինաների հետ (և սա օրինակների ընդամենը մի մասն է):Մեր հետազոտությունը չի մանրամասնել, թե ինչ աստիճանի կամ որակի են հասնել այդ դասընթացները, սակայն ուսանողին այս տեսակի ապագա կարիերային պատրաստելու փաստը ապացուցում է տվյալ փորձի գոյությունը աշխարհի բազմաթիվ զարգացած և զարգացող երկրներում: Այն նշում է, որ համայնքի զարգացման մասնագետի շուկայական պահանջարկ կա:

4. Practice Insights 9. Special 65th Birthday Issue. January 2018.
5. http://www.iacdglobal.org/practice-exchange/mapping-study/

Այսպիսով IACD- ը, որպես միջազգային մասնագիտական ասոցիացիա, վստահ է, որ կարևոր է խրախուսել համայնքի զարգացման նպատակի համընդհանուր արժեքների ըմբռնումը պրակտիկ մասնագետների (վարձատրվող և չվարձատրվող) կողմից: Մենք մտադիր ենք պահպանել գործնական բարձր ստանդարտները, որոնք հիմնված են համաձայնեցված կոլեկտիվ տեսակետի վրա, թե ինչ՞ է և որ՞ դեպքում է «մասնագիտական» տերմինը նշանակում «իրավասու, կոմպետենտ»: IACD- ի համայնքի զարգացման համաձայնեցված սահմանումը, այնուհետև պետք է հանդիսանա որպես համայնքի զարգացման պրակտիկայի միասնական միջազգային ստանդարտների նախագծման և խթանման, ինչպես նաև տվյալ ուղղության ուսուցման ու վերապատրաստման մեկնարկային կետ:

Այն դեպքում, երբ մենք կանգնած ենք տարեցտարի ավելացող մարտահրավերների արջև, իսկ համայնքային զարգացման ոլորտում նոր աշխատատեղերն ու գործնական հնարավորությունները հայտնվում են ամենուրեք, առավել կարևոր նշանակություն են ձեռք բերում ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակները (SDG) և դրանց իրականացումը թե՛ ազգային և թե՛ տարածաշրջանային մակարդակով: Այսօր մեր մասնագիտությանն անհրաժեշտ է և կարևոր վերագնահատել համայնքի զարգացման գոյություն ունեցող մասնագիտական ուսուցման հնարավորությունները: Մենք պիտի հասկանանք, արդյոք՞ նրանք համապատասխանում են արդիական մարտահրավերներին, թե ոչ: ՄԱԿ-ի կողմից Կայուն զարգացման նպատակների ընդունումը 2016-ին հսկայական հնարավորություն է համայնքի զարգացման մասնագետների համար: Մասնակցելով այս նպատակների իրականացմանը, բարձրացնելով համայնքների կլիմայի փոփոխության խնդիրները լուծելու ունակությունը, նպաստելով առողջ ապրելակերպին, նվազեցնելով աղքատությունը և շարունակական ուսում ստանալով, մասնագետները կցուցադրեն, թե ինչպես աջակցել համայնքներին իրենց կարողությունների ընդլայնման գործում.

ԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԵԼՈՎ

Վերջին տարիներին մի շարք ազգային ասոցիացիաներ և ազգային համայնքների զարգացման գործակալություններ սահմանել են այն, ինչը սովորաբար անվանում են ազգային ստանդարտներ կամ համայնքային զարգացման մասնագիտական չափանիշներ: Դրանք նկարագրում են, թե ինչ պետք է կատարի, իմանա և հասկանա անձը համայնքի զարգացման փորձի իրազեկ լինելու համար: Այդ ստանդարտները նպաստում են աշխատուժի մասնագիտական զարգացմանը, խրախուսելով առաջավոր փորձը, որը միավորում է գիտելիքները, հմտություններն ու արժեքները՝ որպես տվյալ աշխատանքի հիմք: Որոշ երկրներում այդ ազգային ստանդարտներն օգտագործվում են կոլեգիալ մոնիտորինգի համար՝ հաշվի առնելով մասնագետ-պրակտիկների, կառավարիչների, «օգտատերերի», կրթական հաստատությունների շահերը և գործնականում նրանց սխալանքի փորձը: Այս դեպքում նպատակը մի շարք համաձայնեցված ստանդարտների լրակազմի մշակումն է, որն արտացոլում է համայնքի զարգացման մտադրությունների, գործընթացների և առանցքային դերերի ընդհանուր ըմբռնումը, ինչը կարող է ապահովել աջակցություն բոլոր պրակտիկ մասնագետներին:

Չնայած գոյություն ունեցող ստանդարտների մեծ մասը հիմնված է հյուսիսային կիսագնդի համայնքների պրակտիկայի և գիտելիքների (ինչպես նաև ենթադրությունների) վրա, այն փաստը, որ մի շարք երկրներում տարբեր ազգային ասոցիացիաներ և համայնքային զարգացման գործակալություններ ներդնում են այդ չափանիշները, չափազանց կարևոր մեկնակետ է: Մենք համոզված ենք, որ այս մոտեցումները կարող են ընդունվել և հարմարեցվել ամբողջ աշխարհում: Եվ այս գործընթացն, իսկապես, ընթանում է, օրինակ, Հարավային Աֆրիկայում և Նոր Զելանդիայում:

Վերջին երեք տասնամյակների ընթացքում տարբեր երկրներում պրակտիկ-մասնագետների, դասավանդողների և գործատուների կողմից հսկայածավալ աշխատանք է իրականացվել՝համաձայնեցնելու համար, թե ինչպիսի իրավասություններ են անհրաժեշտ համայնքի զարգացման պրակտիկայի համար, և դրա հետ կապված՝ ինչ գիտելիքների, հմտությունների և արժեքների պետք է տիրապետեն պրակտիկ մասնագետները և ինչպիսի՞ ուսուցման կարիք ունեն նրանք:

Այդ ազգային ստանդարտները մեկնակետ են, որից պետք է սկսվի մարտահրավերն ընդունելու, փոփոխելու և հարստացնելու գործընթացը (ստանդարտների օրինակները բերված են ստորև): Այն, ինչ այժմ մենք անվանում ենք «Համայնքի զարգացման փորձի համընդհանուր միջազգային չափանիշներ», զգալի չափով հենվում է վերջերս Իռլանդիայի, Միացյալ Թագավորության, Հարավային Աֆրիկայի և Նոր Զելանդիայի նման երկրներում կիրառվող աշխատանքների վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԱՎԵԼԻՆ Է, ՔԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Ստորև մենք նկարագրում ենք, թե ինչպիսին է IACD-ի համայնքի զարգացման պրակտիկայի տեսլականը առանցքային ոլորտների, թեմաների և հիմնական հիմնավորումների վերաբերյալ: Այս պրակտիկան իրականացնում են տարբեր դերակատարում ունեցող և տարբեր համատեքստում հանդես եկող մարդիկ, ներառյալ՝ այն անձինք, որոնք անմիջականորեն կոչվում են համայնքի պրակտիկ-մասնագետներ (և այն մարդիկ, որոնք, ըստ էության, նույն գործունեությունն են կատարում, բայց որոնց աշխատանքն այլ անվանում ունի)՝ այլ ոլորտների (սոցիալական աշխատանք , մեծահասակների կրթություն, աշխատանք երիտասարդների հետ, բժշկասանիտարական հայեցակարգեր, բնապահպանական կրթություն, տնտեսական զարգացում, քաղաքաշինություն, ճարտարապետություն և այլն) մասնագետների հետ համատեղ, որոնք ձգտում են կիրառել և ներդնել համայնքի զարգացման արժեքներն ու մեթոդները:

Մենք առաջարկում ենք բոլոր այդ մասնագետներին անվանել «համայնքի զարգացման պրակտիկ-մասնագետ» և օգտագործել այն որպես համապարփակ եզրույթ/տերմին, որը նաև ներառում է «համայնքային աշխատողներին»: Այս եզրույթը/տերմինը մենք օգտագործում ենք այն մարդկանց համար, որոնք ներառված են (վարձատրվող կամ չվարձատրվող) մասնագիտական գործունեության տվյալ ոլորտում և հարակից ոլորտների այլ մասնագետների համար, որոնք կյանքի են կոչում և կիրառում համայնքի զարգացման արժեքները:

Համայնքի զարգացման փորձը նաև ընդգրկում է մի շարք մասնագիտական դրվածքներ ու դիրքորոշման աստիճաններ՝ համայնքների հետ աշխատողներից սկսած մինչև համայնքի կառավարման գործառույթը և ռազմավարական պլանավորումն իրականացնողները:.

6. http://cldstandardscouncil.org.uk/
http://www.ohcc-ccso.ca/en/courses/community-development-for-health-promoters/module-one-concepts-values-and-principles/values-
http://ctb.ku.edu/en/table-of-contents/analyze/choose-and-adapt-community-interventions/ethical-issues/main
cdctn.org/photos/custom/3.%20Code%20of%20Ethics.pdf
http://www.iedconline.org/web-pages/inside-iedc/iedc-code-of-ethics/
http://www.comm-dev.org/about/principles-of-good-practice
http://cldstandardscouncil.org.uk/resources/national-occupational-standards/

Վերոնշյալ բոլոր պրակտիկ-մասնագետների դերակատարումը կենսական նշանակություն ունի, որն օժանդակում է ժողովրդավարության, ընդունված նորմերի, կայուն զարգացման, տնտեսական հնարավորությունների, հավասարության և սոցիալական արդարության իրականացմանը՝ համայնքներում իրականացվող կազմակերպման, կրթական և մարդկանց իրավունքների ու հնարավորությունների ընդլայնմանն ուղղված աշխատանքների շնորհիվ: Հուսով ենք, որ այդ ստանդարտներն օգտակար կլինեն բոլորի համար:

ԵՎՍ ՄԵԿ ԱՆԳԱՄ ՈՒՇԱԴԻՐ ՀԱՅԱՑՔ IACD- Ի ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԻՆ

“Համայնքի զարգացումը և՛ գործնական փորձի վրա հիմնված մասնագիտություն է, և՛ ակադեմիական հայեցակարգ է, որը նպաստում է ժողովրդավարության, ընդունված նորմերի, կայուն զարգացման, տնտեսական հնարավորությունների, հավասարության և սոցիալական արդարության իրականացմանը կազմակերպական աշխատանքների, կրթության, համայնքներում մարդկանց իրավունքների ու հնարավորությունների ընդլայնման միջոցով՝ լինի դա միավորում ըստ բնակավայրի, ինքնության, շահերի, գյուղական, թե քաղաքային շրջաններում:”

Այս սահմանումը կարելի է դիտարկել որպես հիմնարար արժեքների, նպատակների և աշխատանքի միասնական մեթոդների մարմնավորում:

Ա. Հիմնարար արժեքներ

Այս սահմանումը ներառում է թե՛ հստակ և թե՛ ենթադրյալ հիմնավորումները արժեքների և իդեալների մասին, որոնց վրա պետք է հիմնված լինի համայնքի զարգացման պրակտիկան: Դրանք կարող են արտահայտվել որպես.

Համախոհություն ընդունված նորմերին, համերաշխությանը, ժողովրդավարությանը,հավասարությանը, բնապահպանական, սոցիալական անարդարությանը:

Արժեքների մասին այս կարգախոսը դիրքավորում է մասնագիտական պրակտիկան որպես տարբեր համատեքստերում, մարդկանց և կազմակերպությունների հետ զանազան ծրագրերի իրականացման գործում էթիկական չափանիշներն իրականացնող աշխատանք:

Բ. Նպատակ

Սահմանման մեջ կա հիմնավորում համայնքի զարգացման նպատակների մասին.

Համագործակցել համայնքի հետ ժողովրդավարության սկզբունքների, կայուն զարգացման, ընդունված նորմերի, իրավունքներին, տնտեսական հնարավորություններին, հավասարության ու սոցիալական արդարության պահպանման համար:

Նման բարձրաստիճան նպատակադրությունը կարող է օգտագործվել որպես չափորինակ (էտալոն)՝ չափելու ինչպես գործընթացն ինքնին, այնպես էլ ձեռք բերված արդյունքները:

Գ. Հիմնական մեթոդներն ու գործընթացները

Սահմանումը հստակորեն նշում է համայնքի զարգացման պրակտիկ-մասնագետների կողմից օգտագործվող մեթոդներն ու գործընթացները.

«կազմակերպման, կրթության, համայնքներում մարդկանց իրավունքների ու հնարավորությունների ընդլայնման միջոցով...»:

Համայնքի զարգացման կազմակերպման և վերապատրաստման մեթոդները կենտրոնացած են, թե ինչպես մասնակիցները կարող են կազմակերպական կառուցվածքի և կրթական գործընթացի, գործողությունների և ուսուցման միավորման միջոցով ընդլայնել իրենց իրավունքներն ու հնարավորությունները: Այս գործընթացը հիմնված է մասնակիցների և կազմակերպիչ-ուսուցչի դերում հանդես եկող `համայնքի զարգացման պրակտիկ-մասնագետների երկխոսության վրա: Այն պետք է հիմնված լինի փոխադարձ հարգանքի ամրապնդման, վստահության և իմացության վրա: Այստեղ մենք ընդունում ենք համայնքային զարգացման պրակտիկայում առկա հակամարտությունները, ընթացիկ գործերի համար մարտահրավեր հանդիսացող հակասությունները և անվստահությունը հաղթահարելու կարևորությունը, ինչպես նաև այն հասկացության կարևորությունը, որը մեր հարցվողներից մեկն անվանել է «իրավասու համերաշխություն»:

Որն է մասնակցի սահմանումը:

Դ. Մասնակիցներ

IACD- ի սահմանումը վերաբերում է իրենց համայնքների շրջանակի մարդկանց՝ անկախ իրենց գտնվելու վայրից, նույնականացումից կամ հետաքրքրություններից: Այստեղից՝ տրամաբանական եզրակացություն.պրակտիկ մասնագետի համար առաջնայինը համայնքի մարդկանց հետ աշխատելն է, քանզի հենց դա է համայնքի զարգացման կորիզը: Սակայն համայնքի գոյությունը դատարկության մեջ չէ: Այն մշտական փոխգործակցության մեջ է պետական մարմինների լայն շրջանակի, ոչ կառավարական կազմակերպությունների, գործարարների, ծառայություններ մատուցողների, ղեկավարների, քաղաքական գործիչների և, առհասարակ, քաղաքացիական հասարակության հետ: Սա համայնքի զարգացման պրակտիկ-մասնագետի աշխատանքի երկկողմանի ուղղվածությունն է. ինչպես համայնքի մարդկանց, այնպես էլ գործակալությունների ու կազմակերպությունների լայն շրջանակի հետ, որոնք կարող են և այդ համայնքների շրջանակից դուրս լինել: Օրինակ՝պետական և տեղական իշխանությունները, ոչ կառավարական կազմակերպությունները, մասնավոր ոլորտը, միջազգային և ազգային դոնորները, այլ հովանավորներ և այլն: Այսպիսով, պրակտիկ-մասնագետի կողմից իրականացվող կազմակերպչական և կրթական աշխատանքը կապված է նաև համայնքից դուրս գործակալությունների հետ փոխգործակցությամբ, որպեսզի նրանք համայնքներին ավելի լայն իրավունքներ և հնարավորություններ տրամադրեն:



Մենք առանձնացրել ենք համայնքի զարգացման պրակտիկայի հետևյալ 8 ընդհանուր թեմաները.

- Պրակտիկայում արժեքների ներդրում
- Ներգրավվածություն համայնքներում
- Համատեղ պլանավորման ապահովում
- Բարելավումների կազմակերպում
- Բարելավումներ կատարելու ուսուցում
- Նպաստում ներառման և բազմազանության ճանաչմանը
- Առաջնորդության և ենթակառուցվածքի զարգացում
- Քաղաքականության և գործելակերպի մշակում և բարելավում

Նկար 1.Ամբողջ աշխարհում համայնքի ընդհանուր զարգացման համատեքստում տարածված թեմաները



Տվյալ նկարը պարզապես հիմնական թեմաների ցուցադրությունն է և չի ենթադրում որևէ արհեստական գծային գործընթաց, որտեղ մի քայլը հաջորդում է մյուսին: Կյանքի իրողություններն այնպիսին են, որ նրանցից յուրաքանչյուր զույգի միջև կարող է հետադարձ կապի շարունակելի ցիկլ լինել, քանի որ համայնքի զարգացման պրակտիկ-մասնագետը գործնականում աշխատում է համայնքների մարդկանց և այդ համայնքների վրա ազդեցություն ունեցող բազմաթիվ կազմակերպությունների և գործակալությունների հետ:

Այնուհետև մենք սահմանեցինք համայնքի զարգացման համար՝ այդ թեմաներից յուրաքանչյուրի հետ կապված և մարդկանց կողմից իրականացվող (անկախ նրանց զբաղվածությունից) առանցքային ոլորտները: Դրա հետ մեկտեղ, մենք յուրաքանչյուր առանցքային ոլորտի համար ստանդարտ դրույթներ ենք մշակել այն մասին, թե ինչ՞ պրակտիկա պետք է ներկայացվի:

Այդ տեղեկատվությունը բերված է հետագա բաժիններում:

Ինչպես արդեն նշվել է, համայնքի զարգացման մասնագիտական պրակտիկան ներառում է մի շարք մասնագիտական պայմաններ: Որոշակի դիրքավորման շրջանակներում պրակտիկ-մասնագետները առավել կկողմնորոշվեն կոնկրետ թեմաների և առանցքային ոլորտների ուղղությամբ, քան այլ թեմաների, և կարող են հնարավորություն կամ անհրաժեշտություն չունենալ պրակտիկորեն գործել բոլոր ստանդարտ դրույթների ուղղությամբ: Այնուամենայնիվ, համայնքի զարգացման բոլոր պրակտիկ-մասնագետները պետք է իրազեկված լինեն բոլոր թեմաների, առանցքային ոլորտների և ստանդարտային դրույթների մասին՝, որպեսզի իմանան, թե ինչպես է իրենց փորձը կապված փոփոխությունների առավել լայն գործընթացների հետ ու ինչպես է ազդում դրանց վրա:

Համայնքների ընտրած ռազմավարություններն ու մարտավարությունները (որոնք ավելի շուտ հնարավորություն են ընձեռում հասնել դրական փոփոխությունների) խիստ տարբերվում են տնտեսական, բնապահպանական, սոցիալական և մշակութային տարբեր պայմանների ազդեցությամբ: Համայնքի զարգացման պրակտիկ-մասնագետի դերն այդ ընտրության հարցում այն է, որ հնարավորություն տա համայնքներին զարգացնել այդ պայմանների, դրանց էության սեփական ընկալումը և հասնել իրենց առջև դրված նպատակներին գիտակցված և համատեղ ընդունված որոշումների միջոցով: Սա չի նշանակում, որ պրակտիկ-մասնագետը պետք է համայնքի փոխարեն որոշի, թե հատկապես ինչպիսի ռազմավարություն և մարտավարություն ընտրել: Համայնքի զարգացման մասնագետները, օգտագործելով իրենց կրթական և կազմակերպչական փորձառությունը, նոր գաղափարներով ու հնարավորություններով պետք է կիսվեն այն մարդկանց հետ, որոնց հետ աշխատում են: Պրակտիկ-մասնագետները պետք է իմանան, թե երբ է պետք ուղղակի և երբ՝ անուղղակի միջամտություն:

Թեմաները, առանցքային ոլորտները և ստանդարտ դրույթները համայնքային զարգացման գործնական ուղեցույց են: Դա չի ենթադրում որևէ տեսակի ռազմավարության կամ մարտավարության առավելություն մյուսների նկատմամբ:

ԹԵՄԱ	ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՈԼՈՐՏՆԵՐ
Արժեքների ներդրումը պրակտիկայում	Համայնքի զարգացման արժեքների, գործընթացների և արդյունքների ըմբռնում, ինչպես նաև դրանց կիրառում մյուս առանցքային ոլորտներում:
Ներգրավվածություն համայնքներում	Իմաստալի ներգրավվածություն համայնքներում, հարաբերությունների ստեղծում և պահպանում անհատների և խմբերի հետ:
Համատեղ պլանավորում	Համագործակցային աշխատանքի զարգացում և աջակցություն, ներգրավվածություն դրանում ողջ համայնքով:
Բարելավումների կազմակերպում	Համայնքներին կոլեկտիվ գործելու, սեփական ազդեցությունն ուժեղացնելու և, անհրաժեշտության դեպքում, ռեսուսների հասանելիության հնարավորության պայմանների ստեղծում, կառավարման և ռեսուրսներն ու ծառայությունները վերահսկելու գործընթացներին մասնակցության հնարավորություն:
Բարելավումներ կատարելու ուսուցում	Մարդկանց և կազմակերպությունների աջակցություն՝ համատեղ ուսուցման և սոցիալական փոփոխությունների համար անհրաժեշտ փոխըմբռնման, վստահության և հմտությունների բարելավման համար:
Ներառման և բազմազանության ընդունում	Պրակտիկայի, քաղաքականության, կառուցվածքի և ծրագրերի մշակում և ներդրում, որոնք ընդունում և հարգում են բազմազանությունը, ինչպես նաև խթանում ներառումը:
Առաջնորդության և ենթակառուցվածքների զարգացում	Օգնություն և աջակցություն համայնքների կազմակերպական և ենթակառուցվածքային զարգացմանը, իրավունքների և հնարավորությունների ընդլայնումն ապահովող առաջնորդության խրախուսում:
Քաղաքականության և գործելակերպի մշակում և կատարելագործում	Համայնքի զարգացման քաղաքականության և գործելակերպի մշակում, գնահատում և շտկում՝օգտագործելով ռազմավարական և գործնական պրակտիկայի կատարելագործման և իրազեկման գնահատման համատեղ համակարգը:

ԹԵՄԱՆԵՐ, ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՈԼՈՐՏՆԵՐ ԵՎ

ԹԵՄԱ 1
Արժեքների կիրառում

Այս թեման լուսաբանում է արժեքները, որոնք ամրապնդում են համայնքի զարգացման փորձը հասարակական բոլոր համատեքստերում և գործընթացներում, որոնց վրա հենվում է այդ պրակտիկան, արդյունքներում, որոնց հանգեցնում է այդ պրակտիկան, ինչպես նաև պրակտիկ-մասնագետի կողմից այդ հասկացության սեփական ընկալումով կիրառելիս:

Համայնքի զարգացման պրակտիկա ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՈԼՈՐՏ 1

Համայնքի զարգացման արժեքների, գործընթացների և արդյունքների ընկալումը, ինչպես նաև դրանց գործնական կիրառումը բոլոր առանցքային ոլորտներում:

Համայնքի զարգացման այս առանցքային բնագավառում հայեցակարգերի ամբողջական շարք կիրառող պրակտիկ-մասնագետները պետք է ցուցադրեն, որ իրենք՝

ա. ընկալում են համայնքի զարգացման արժեքները, գործընթացներն ու արդյունքներն իրենց սեփական համատեքստում և դիրքորոշումներում.

բ. գիտեն՝ ինչպես ինքնակատարելագործվել որպես համայնքի զարգացման պրակտիկ-մասնագետ.

գ. գիտեն, թե ինչպես աջակցել համայնքի զարգացմանն ու խրախուսել այն թե' իրենց սեփական և' թե' այլ կազմակերպությունների պրակտիկայի շրջանակներում:

ԹԵՄԱ 2
Ներգրավվածություն համայնքում

Այս թեման լուսաբանում է համայնքների ուսումնասիրությունը, որոնց հետ աշխատում են պրակտիկ-մասնագետները, այդ համայնքների ազդեցիկ հիմնախնդիրների իմաստավորումը, ինչպես նաև դրական փոփոխությունների հիմք հանդիսացող հարաբերությունների զարգացումը:

Համայնքի զարգացման պրակտիկան ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՈԼՈՐՏ 2

Համայնքներում իմաստավորված ընդգրկվածություն, հարաբերությունների ստեղծում և պահպանում ինչպես առանձին անհատների, այնպես էլ խմբերի հետ:

Համայնքի զարգացման այս առանցքային բնագավառում հայեցակարգերի ամբողջական շարք կիրառող պրակտիկ-մասնագետները պետք է ցույց տան, որ իրենք՝

ա.հասկանում են տեղական համայնքների, հատկապես՝ մարգինալացված/լուսանցքում հայտնված խմբերի վրա ազդող սոցիալական, քաղաքական, տնտեսական, մշակութային և բնապահպանական գործոնները.

բ. գիտեն՝ ինչպես կարելի է ուսումնասիրել համայնքը, բացահայտելով վերջինիս ռեսուրսները, պահանջները, ոչ պաշտոնական կապերը, շահերը, շարժառիթները, կառավարման դինամիկան, մասնակցության խոչընդոտները և հնարավորությունները, ինչպես նաև կիրառել իր հետազոտական հմտություններն այդ գործընթացում.

գ. գիտեն՝ ինչպես փոխհարաբերվել համայնքի բոլոր հատվածների հետ, լսել և արդյունավետ հաղորդակցվել ինչպես անձնական շփումներում, այնպես էլ տեղեկատվության փոխանակման հասանելի միջոցների օգնությամբ.

դ. հասկանում, հարգում և ընդունում են համայնքի բոլոր հատվածներում ներգրավված խմբերի աշխատանքը, արժեքները, հնարավորությունները և խնդիրները, ինչպես նաև հարաբերությունները կառուցում են փոխադարձ վստահության հիման վրա.

ե. գիտեն՝ ինչպես աշխատել համայնքների հետ, որոշել մասնակցության և ներառման հնարավորությունները, հաղթահարել գործընթացում ծագող խոչընդոտները.

զ. գիտեն՝ ինչպես աշխատել համայնքների հետ, հասնելով կոլեկտիվ համաձայնության, կռահելով շահերի բախումները և օգտագործելով դրանց լուծման արդյունավետ միջոցներ:

ԹԵՄԱ 3
Համատեղ պլանավորում

Այս թեման լուսաբանում է մասնակցությունը զարգացող համայնքի գործունեությանը, գործընկերության հնարավորությունների և համայնքին ու գործակալություններին աջակցության ընդլայնումը՝ համատեղ աշխատանքի ամրապնդման հմտությունների կատարելագործման նպատակով:

Համայնքի զարգացման պրակտիկա ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՈԼՈՐՏ 3

Համայնքում մասնակցության և համատեղ աշխատանքի ընկալումը, զարգացումը և աջակցությունը:

Համայնքի զարգացման այս առանցքային բնագավառում հայեցակարգերի ամբողջական շարք կիրառող պրակտիկ-մասնագետները պետք է ցույց տան, որ իրենք՝

ա. օգնում են համայնքներին՝ հասկանալու տեղական, ազգային և աշխարհաքաղաքական գործընթացները, իշխանության և ազդեցության աղբյուրները.

բ. հնարավորություններ են ստեղծում համայնքների համար՝ հասկանալու և օգտագործելու ինչպես առկա հետազոտական տեղեկատվությունը, այնպես էլ հետազոտության մեթոդների կիրառությունն իրենց սեփական պայմաններում:

գ. գործընկերություն և համատեղ աշխատանք են նախաձեռնում և մասնակցում՝ համայնքի իրավունքները և հնարավորություններն ընդլայնելու նպատակով, կիռահելով և լուծելով այդ շահերի բախումները.

դ. աջակցում են համայնքների, պետական մարմինների, ոչ կառավարական կազմակերպությունների և այլ գերատեսչությունների միջև հարաբերությունների՝ համայնքների լիազորություններն ու հնարավորություններն ընդլայնելու, նրանց շահերն իրականացնելու նպատակով.

ե. ազդում են պետական մարմինների և որոշում կայացնող այլ կազմակերպությունների վրա՝ համայնքների հետ արդյունավետ հարաբերություններ ստեղծելու համար.

զ. աշխատում են համայնքների և գործակալությունների հետ համայնքի գործնական կարիքները, հնարավորությունները, իրավունքները և պարտականությունները բացահայտելու նպատակով՝ ճանաչելով և լուծելով շահերի բախումները.

է. կոտրում են այն պատնեշները, որոնք խոչընդոտում են համայնքին մասնակցելու պլանավորման, գործողությունների և որոշումների կայացման գործընթացին: Հնարավորություն են տալիս համայնքի ներկայացուցիչներին ակտիվ դերակատարություն ունենալ այդ գործընթացներում:

ԹԵՄԱ 4
Բարելավումների կազմակերպում

Այս թեման լուսաբանում է համայնքների համատեղ գործունեության և դրա համար անհրաժեշտ հմտություններ զարգացնելու համար պայմանների ստեղծումը, ինչպես նաև այնպիսի կոնտեքստի ստեղծումը, որտեղ կոլեկտիվ գործունեությունը կայուն է և բարելավումների դրական ուժ է հանդիսանում:

Համայնքի զարգացման պրակտիկա
ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՈԼՈՐՏ 4

Համայնքների համատեղ փորձի զարգացում, դրանց ազդեցության հզորացում, ռեսուրսների մատչելիության ապահովում, կառավարմանն ու ծառայությունների մատուցմանը մասնակցությանն աջակցություն:

Համայնքի զարգացման այս առանցքային բնագավառում հայեցակարգերի ամբողջական շարք կիրառող պրակտիկ-մասնագետները պետք է ցույց տան, որ իրենք՝

ա. ստեղծում են պայմաններ մարդկանց համատեղ աշխատելու, իրենց ուզած արդյունքները որոշելու, ինչպես նաև համայնքային խմբերի և գործունեության տեսակների զարգացման համար.

բ. աջակցում են համայնքներին դրական բարելավումների հասնելու գործում.

գ. աջակցում են մարդկանց՝համայնքների կամ համայնքային խմբերի միջև կամ ներսում առկա հակամարտությունների լուծման և արդյունավետ կառավարման կազմակերպման գործում.

դ. ազդում են որոշում կայացնող անձանց վրա՝ բացահայտելով նրանց համար համայնքների համատեղ գործունեության և փոխգործակցության պոտենցիալ առավելությունները.

ե. աջակցում են բյուջեները կազմելու համատեղ աշխատանքին համայնքների մասնակցությանը, ինչպես նաև հողերի, ռեսուրսների և ծառայությունների կառավարման հարցերում.

զ. աջակցում են համայնքների ռեսուրսների, ֆինանսավորման և տեխնիկական օգնության հասանելիությանը, իրենց գործունեությունն իրականացնելու համար:

ԹԵՄԱ 5
Բարեփոխումներ կատարելու ուսուցում

Այս թեման լուսաբանում է համայնքի անդամների և նրանց հետ աշխատող պրակտիկ-մասնագետների կրթության խթանումը՝ բարեփոխումների և զարգացման ոլորտում իրենց առաջնահերթություններին աջակցելու համար:

Համայնքի զարգացման պրակտիկա ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՈԼՈՐՏ 5

Մարդկանց և կազմակերպությունների համատեղ ուսուցման խթանումը՝ սոցիալական բարեփոխումների հասնելու նպատակով:

Համայնքի զարգացման այս առանցքային բնագավառում հայեցակարգերի ամբողջական շարք կիրառող պրակտիկ-մասնագետները պետք է ցույց տան, որ իրենք՝

ա. օգտագործում են մարդկանց փորձը, գիտելիքները և հմտությունները՝ որպես համատեղ գործունեության մեկնարկային կետ, ինչպես նաև մասնակիցների և պրակտիկ-մասնագետների կրթական պահանջմունքների բացահայտման և բավարարման մեթոդները.

բ. զարգացնում են իրենց համայնքների զարգացման խիստ արտահայտված կարիքների բավարարման համար ուսուցման հնարավորությունները և գործունեության տեսակները՝ առանձին անհատների և խմբերի հետ երկխոսությամբ.

գ. օգտագործում են հաղորդակցման արդյունավետ հմտությունները, ինչպիսիք են էմպատիկ մասնակցությունը, ինչպես նաև գրավոր և տեսողական հաղորդակցությունը, սոցիալական լրատվամիջոցները, կինոն, տպագիր լրատվամիջոցներն ու ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները՝ կոլեկտիվ ուսուցմանն ու համայնքի գործունեությանն աջակցելու համար.

դ. կոլեկտիվ ուսուցման միջոցով խթանում են փոփոխությունները, որոնք արտացոլում է համայնքի զարգացման արժեքները և նպատակները.

ե. աջակցում են կառավարական, ոչ կառավարական և մասնավոր կազմակերպությունների հետ հարաբերությունների պահպանմանը՝ համայնքի զարգացման հետ կապված, աշխատակազմի ուսուցման կարիքները որոշելու և իրականացնելու նպատակով:

ԹԵՄԱ 6
Բազմազանություն և ներառում

Այս թեման լուսաբանում է բազմազանության և ներառման ճանաչումը՝ որպես պրակտիկայի հիմնական ասպեկտներ:

Համայնքի զարգացման պրակտիկա
ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՈԼՈՐՏ 6

Բազմականությունն ընդունող և հարգող, ինչպես նաև ներառմանը նպաստող պրակտիկաների, քաղաքականության, կառուցվածքների և ծրագրերի մշակում և ներդրում:

Համայնքի զարգացման այս առանցքային բնագավառում հայեցակարգերի ամբողջական շարք կիրառող պրակտիկ-մասնագետները պետք է ցույց տան, որ իրենք՝

ա. գիտակցում են, թե ինչպես են սոցիալական, քաղաքական, տնտեսական, մշակութային և բնապահպանական գործոններն ազդում համայնքի տարբեր հատվածների, հատկապես, մարգինալացված, լուսանցքային խմբերի վրա.

բ. աշխատում են, կիրառելով ներառական մոտեցում տարբեր, այդ թվում՝ նաև մարգինալացված համայնքներում, փոխգործակցության մեթոդների միջոցով ապահովելով ներառականությունը և հարգանքը բազմազանության նկատմամբ.

գ. գիտեն՝ ինչպես աջակցել խմբերին հմտությունների զարգացման հարցում և վստահ են մարգինալացված համայնքները ներգրավելու հարցում.

դ. գիտեն՝ ինչպես պայքարել համայնքների և համայնքային խմբերի հետ աշխատող գործակալությունների կողմից իրականացվող խտրականության դեմ, ինչպես աջակցել հեռացված, մարգինալացված և խտրականության ենթարկված մարդկանց, որպեսզի նրանք կարողանան լիարժեք ակտիվ մասնակցություն ունենալ գործունեության և համայնքի խմբերի մեջ.

ե. գիտեն՝ հարգանքով վերաբերվել օտար մշակույթին, ստեղծել ապահով տարածություններ տարբեր տեսակետներ և տարբեր աշխարհայացքներ (ներառյալ՝ բնիկ ժողովուրդների ավանդույթներն ու սովորույթները) ունեցող մարդկանց համար, որպեսզի նրանք կարողանան լիարժեքորեն մասնակցել համայնքի կյանքին.

զ. գիտեն՝ ինչպես աջակցել գործակալություններին և համայնքներին ներառական պրակտիկաներ որդեգրելու և բազմազանությունը հարգելու գործում.

է. գիտեն՝ ինչպես մշակել և պաշտպանել սոցիալական ներառական ռազմավարությունները, ծրագրերն ու գործնական աշխատանքները:

ԹԵՄԱ 7
Առաջնորդություն և ենթակառուցվածք

Այս թեման լուսաբանում է համայնքներում առաջնորդության հնարավորությունների և իրավունքների ընդլայնումը, ինչպես նաև ենթակառուցվածքների կատարելագործումը համայնքի զարգացման և կայուն սոցիալական բարեփոխման նպատակով:

Համայնքի զարգացման պրակտիկա ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՈԼՈՐՏ 7

Նպաստում և աջակցությունը ենթակառուցվածքների կազմակերպական կատարելագործմանը՝ համայնքի զարգացման նպատակով, խթանելով և ընդլայնելով առաջնորդության հնարավորությունները:

Համայնքի զարգացման այս առանցքային բնագավառում հայեցակարգերի ամբողջական շարք կիրառող պրակտիկ-մասնագետները պետք է ցույց տան, որ իրենք՝

ա. աջակցում են խմբերին իրենց գործելակերպը և ռազմավարությունը, արտաքին հնարավորություններն ու սպառնալիքները վերանայելու գործընթացում.

բ. աջակցում են խմբերին իրենց ապագա կայունությունը պլանավորելու, իրենց խնդիրներին ու նպատակներին հասնելու համար ռազմավարական և գործարար պլանները մշակելու գործում.

գ. աջակցում են համայնքի ներսում հաշվետու և ժողովրդավարական առաջնորդության ներուժի զարգացմանը.

դ. գիտեն՝ ինչպես ազդել սեփական և գործընկեր կազմակերպությունների վրա, ինչպես նաև խորհուրդներ տալ դրանց կազմակերպչական կառուցվածքի, մշակույթի, քաղաքականության, գործելակերպի և վարքագծերի առումով՝ համայնքի զարգացմանը աջակցելու նպատակով.

ե. գիտակցում են քաղաքական համատեքստը և դրան հետ կապված հնարավորությունները, մարտահրավերներն ու ռիսկերը, աջակցում են համայնքներին և գործընկերներին տվյալ համատեքստում ռազմավարությունը մշակելու գործում.

զ. կրթում և խրախուսում են տեղական համայնքների առաջնորդներին համայնքների և համայնքներում ներգրավվածության հարցում շահագրգիռ գործընկերների հետ աշխատելու գործընթացում առաջնորդվել ժողովրդավարական ներառական մտածելակերպի ներդրումով.

է. աջակցում են և ազդում կազմակերպությունների վրա համայնքի արդյունավետ զարգացման փորձին նպաստող աշխատանքային համակարգերի մշակման գործընթացում:

ԹԵՄԱ 8

Քաղաքականության և գործելակերպի մշակում և բարելավում

Այս թեման լուսաբանում է ռազմավարության և գործնական փորձի մշակման և հստակեցման համար միասնական գնահատման և համապատասխան արտաքին գործոնների վերլուծության համակարգի հիման վրա ստացած տեղեկությունների կիրառումը:

Համայնքի զարգացման պրակտիկա ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՈԼՈՐՏ 8

Քաղաքականության և համայնքի զարգացման պրակտիկայի գնահատման համակարգի մշակում՝ հիմնված հետադարձ կապի վրա, ռազմավարական և գործնական պրակտիկայի կատարելագործման համար:

Համայնքի զարգացման այս առանցքային բնագավառում հայեցակարգերի ամբողջական շարք կիրառող պրակտիկ-մասնագետները պետք է ցույց տա, որ իրենք՝

ա. ուսումնասիրում և գնահատում են համայնքի զարգացման գործունեության տեսակները և փորձը՝ կիրառելով հետադարձ կապի մեթոդները:

բ. խրախուսում են համայնքի խմբերին առաջընթացն արտացոլելու համար օգտվելու գործունեության մշտադիտարկումից և գնահատումից, աջակցում են փորձի հիման վրա ուսուցմանը, ինչպես նաև արդյունքների վերլուծության և հետագա գործողությունների պլանավորման գործընթացը:

գ. հավաքում և օգտագործում են իրենց իսկ սեփական փորձով ձեռք բերված և համայնքների (որոնց հետ իրենք աշխատում են) տրամադրած տվյալները՝ տեղեկացնելու և քաղաքականության ու գործնական փորձի զարգացման վրա ազդելու նպատակով.

դ. վերլուծում են համայնքի զարգացման պրակտիկայի վրա ազդող սոցիալական, քաղաքական, տնտեսական, մշակույթային և բնապահպանական փոփոխությունները սեփական համատեքստում.

ե. աջակցում են պրակտիկ-մասնագետներին և համայնքային խմբերին գործնական փորձի գործունեության համատեղ մշտադիտարկման և գնահատման կիրառման գործում՝ պրակտիկան ինքնաբերական դարձնելու և զարգացնելու համար, ինչպես նաև ցուցադրել ձեռքբերումների արդյունքները.

զ.գնահատում են համայնքի գործունեության տվյալները և վերլուծում են սոցիալական, քաղաքական, տնտեսական և բնապահպանական պայմանները՝ քաղաքականության և պրակտիկայի զարգացման հստակեցման համար.

է. իրենց աշխատանքում ընդգրկում են քննադատական վերլուծության մոտեցումը, որն ապահովում է պրակտիկայի շարունակական ուսուցումը և կատարելագործումը.

ը. գործակալությունների, հովանավորների և այլ շահագրգիռ կողմերի համար պատրաստում են արդյունավետության ցուցանիշները ներառող վերլուծական հաշվետվություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԵՏԱԳԱ ՔԱՅԼԵՐ

Ընդհանուր միջազգային չափանիշների մշակումը մշտապես հաջորդ տրամաբանական քայլն է հանդիսացել համայնքի զարգացման ընդհանուր սահմանումը հստակեցնելու գործում:

Հաշվի առնելով, որ այդ սահմանումն ընդունող և ավելի հաճախ կիրառող կողմնակիցների թիվն ավելանում է, մենք հույս ունենք, որ Միջազգային չափանիշները նույնպես ակտիվ աջակցություն կվայելեն: Այս ուղեցույցի ներածական մասում նշվել էր, որ այս Միջազգային չափանիշները դիտարկվում են որպես մեկնարկային կետ տարբեր երկրներում աշխատող համայնքի զարգացման պրակտիկ-մասնագետների համար: Տվյալ Չափանիշները պետք է կիրառվեն և հարմարեցվեն սոցիալական, տնտեսական, մշակութային և քաղաքական տարբեր համատեքստերում, և մենք ընդունում ենք, որ այդ պայմանները կարող են էականորեն տարբերվել, և հետևաբար՝ Միջազգային չափանիշները պարտադրող չեն: IACD-ը չի կարգավորում գործնական փորձը և որևէ պահանջ չի ներկայացնում կազմակերպություններին կամ պրակտիկ-մասնագետներին՝ կիրառել և որդեգրել տվյալ Չափանիշները: Այնուամենայնիվ, մենք մտադիր ենք առաջարկել դրանք որպես ուղեցույց ծառայողների, պրակտիկ մասնագետների, ուսուցողական և կրթական կառույցների, համայնքի զարգացման տարածաշրջանային և ազգային ասոցիացիաների, ինչպես նաև ազգային կառավարությունների համար՝ համայնքի զարգացման փորձի, մասնագիտական զարգացման հնարավորությունների և ծրագրերի որակը բարձրացնելու նպատակով: Միջազգային չափանիշները նաև հնարավորություն են ընձեռում ընդլայնելու միջազգային համագործակցությունը, համայնքի զարգացման ոլորտում գիտելիքների և փորձի փոխանակումը համաշխարհային մակարդակով:

Ավելին, մենք հուսով ենք, որ այս Ընդհանուր միջազգային չափանիշները կխթանեն համայնքների զարգացման գործընթացով զբաղվող և ներգրավված անձանց շրջանում պրակտիկայի փոխկապակցվածության աճող գլոբալ ընկալումը:

Ինչպե՞ս կարող են կիրառվել Միջազգային չափանիշները

Չնայած Չափանիշները կարող են օգտագործվել որպես նպատակակետի (արդյունքների) կոլեկտիվ բացահայտման և դրան հասնելու (գործընթացի) ճանապարհի ուղեցույց, դրանք կարող են կիրառվել նաև ինչպես այդ ճանապարհի և արդյունքների քննադատական վերահմաստավորման նպատակով: Այլ կերպ ասած, Չափանիշները կարող են կիրառվել գործունեությունը պլանավորելու, իրականացնելու, վերլուծելու, ինչպես նաև աշխատանքի ընթացքում ուսուցանման համար:

Այսպիսով, Չափանիշները համայնքի զարգացման յուրաքանչյուր պրակտիկ-մասնագետ կարող է կիրառել տարբեր կերպ՝

- համայնքի զարգացում հասկացության հստակ պատկերացման, մեկնաբանման և զարգացման համար,
- արժեքների խթանման համար, որոնց վրա հիմնված է համայնքի զարգացումը,
- գործնական փորձ հզորացման համար,
- հայեցակարգերի և քաղաքականության հստակեցման համար,
- ակադեմիական և գործնականի ուսուցման ձևավորման համար:

Հուսով ենք, որ Միջազգային չափանիշները կընդունվեն համայնքային զարգացման պրակտիկ-մասնագետների կողմից: Այն երկրներում, որտեղ արդեն ազգային չափանիշները մշակված են, դրանք կլինեն փոխլրացնող, իսկ այն երկրներում, որտեղ ազգային չափանիշները դեռևս մշակված չեն՝ դրանք կծառայեն որպես գործողությունների ուղեցույց:

Չափանիշների նախագծի մշակման գործընթացում մենք խնդրել էինք խորհրդակից մասնակիցներին առաջարկել դրանց օգտագործման ուղիներ և կոնկրետ գաղափարներ: Այդ առաջարկները նշված են ստորև՝

• նշանակումների, արժեքների, միջազգային և տեղական համատեքստում համայնքի զարգացման առանցքային ոլորտների, համայնքների միջև և ներհամայնքային, ինչպես նաև տարբեր գերատեսչությունների և կազմակերպությունների միջև քննարկումների համար.

• այն ռեսուրսների զարգացման գործընթացում, որոնք բացահայտում են, թե տարբեր համատեքստերն ինչ ազդեցություն են թողնում տարբեր երկրներում/համայնքներում պրակտիկայի ընդհանուր ոլորտների վրա.

• միջազգային կապերի աջակցման, փորձի փոխանակման և գործնական օրինակների խթանման համար.

• համայնքների և կազմակերպությունների ներսում համայնքի զարգացման արժեքների և առանցքային դրույթների ընդհանուր ընկալման խթանման համար.

• համայնքը կառավարելու և համատեղ պլանավորման քննարկումներին աջակցելու համար, որը կոլեկտիվ գործունեության հնարավորություն է տալիս, ընդլայնում է լիազորություններն ու հնարավորությունները.

• շարունակական կրթության և համայնքի զարգացման պրակտիկ մասնագետների՝ աշխատանքի ընթացքում վերապատրաստման ծրագրերի մասին տեղեկացնելու համար.

• ռեֆլեկտիվ պրակտիկայի ինքնագնահատման գործիքների մշակման համար.

• աջակցելու փորձի և այնպիսի օրինակների փոխանակման հարցում, թե ինչպես են կիրառվում չափանիշները համայնքի զարգացման պրակտիկայի յուրաքանչյուր առանցքային բնագավառում, ինչպես նաև համատեղ թեմաներով միջազգային փորձը ներառելու համար.

• միջազգային ռեսուրսների մշակման համար՝ ընդգրկելու կրթական և վերապատրաստման ծրագրերում, պրակտիկայի առանձնահատկությունները և խնդիրները հանգամանալից հասկանալու համար.

• IACD-ի Համայնքի զարգացման միջազգային փոխանակման (GCDEX) ուսուցանման ռեսուրսների արխիվի տվյալների հստակեցման համար.

• «Ընդհանուր բազայի» ստեղծման նպատակով, որի հիման վրա կարող են մշակվել և զարգանալ համայնքների զարգացման պրակտիկայի ասպեկտներն ուսումնասիրող միջազգային գիտահետազոտական և կրթական ծրագրեր:

Համատեղ ուսուցմանն աջակցելու համար մենք դիմում ենք ձեզ կոչով՝ կիսվել մեզ հետ, թե ինչպես եք դուք կիրառում այս չափանիշները: Որպես դինամիկ «Գործնական փորձի համայնքներ» ստեղծելու առաջին քայլ՝ IACD-ն իր կայքէջում կթողարկի Չափանիշների բաց ֆորում և կստեղծի GCDEX- ի հատուկ բաժին, որտեղ մասնակիցները կարող են կիսվել չափանիշների կիրառման իրենց փորձով և գործնական փորձի հետ կապված ցանկացած ռեսուրսով: Բացի այդ, մենք մտադիր ենք աջակցել համայնքի զարգացման ուսուցիչներ պատրաստող կրթական հաստատությունների համար միջազգային ֆորումի ստեղծմանը:

1970-80-ական թվականներին IACD-ը վարում էր Համայնքների զարգացման դասընթացներ (Community Development Training Clearing House): Այս ծրագիրը վաղուց չի գործում, և համայնքի զարգացման ոլորտում կրթական և վերապատրաստման որոշակի մակարդակ ապահովող ուսուցողական ծրագրերի ու դասընթացների լայն տարածվածության պայմաններում, մեր կրթական դերն արդեն սպառել է իրեն: Այնուամենայնիվ, առաջիկա տարիներին IACD- ի Ուսուցման և մասնագիտական զարգացման հանձնաժողովը համագործակցելու է մեր գործընկերների հետ դասընթացներ մշակելու և հավատարմագրելու նպատակով, այդ թվում՝ նաև առցանց ծրագրեր և շարունակական մասնագիտական ուսուցման զարգացող մոդուլները՝ ուղղված տարբեր երկրների համայնքի զարգացման պրակտիկ մասնագետներին և մեր ուսումնական ծրագրերի կարճատև դասընթացներում ընդգրկելով հավատարմագրված տարրեր:

Եթե դուք շահագրգռված եք այս գործընթացի մասնակիցը դառնալու և ցանկանում եք միանալ IACD միջազգային Չափանիշների վրա հիմնված «Գործնական փորձի համայնքին»՝ հիմնված IACD–ի Միջազգային չափանիշների վրա, խնդրում ենք դիմել IACD-ի Ուսուցման և մասնագիտական զարգացման հանձնաժողովի ղեկավար Ջոն Սթենսֆիլդին (John Stansfield): jstansfield@unitec.ac.nz

This report was prepared for IACD by Colin Ross, Anna Clarke, Charlie McConnell, Paul Lachapelle and John Stansfield. IACD wishes to acknowledge the considerable support received from the Community Learning and Development Standards Council Scotland.

IACD's Practice Insights magazine

sharing practice and research about community development from around the world.

www.iacdglobal.org/category/resources/magazine/

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ IACD- Ի ՄԱՍԻՆ

IACD-ը համայնքի զարգացման պրակտիկ-մասնագետների միակ համաշխարհային ցանցն է: Մենք աջակցում ենք զարգացման գործակալություններին և գործող մասնագետներին՝ ընդլայնելու համայնքների կարողությունները և ապահովելու առավել բարձր աստիճանի սոցիալական և տնտեսական հավասարություն, պաշտպանելու շրջակա միջավայրը և քաղաքական ժողովրդավարությունը:

Մեր գործունեությունը

IACD-ը միմյանց է կապում մարդկանց: Մենք նպաստում ենք փորձի և պրակտիկայի անմիջական և հեռակա փոխանակմանը: Աշխատում ենք գործընկերների հետ՝ տարածաշրջանային, ազգային և միջազգային միջոցառումներ, ճանաչողական այցեր և գիտաժողովներ անցկացնելու նպատակով: Մենք փաստաթղթավորում ենք մեր մասնակիցների՝ ողջ աշխարհում իրականացվող աշխատանքը՝ հավաքելով առանձին թեմատիկ ուսումնասիրությունները, համայնքի զարգացման գործիքներն ու նյութերը, փոխանակելով դրանք մեր կայքի, էլեկտրոնային տեղեկագիրների և հրապարակումների միջոցով: Մենք իրականացնում ենք հետազոտական ծրագրեր՝ հենվելով միջազգային փորձի վրա:

IACD- ի նպատակն է հնարավորություն տալ իր մասնակիցների ձայնը հասանելի դարձնել համաշխարհային հանրությանը, միջազգային համաժողովներում և խորհրդակցություններում հանդես գալ համայնքի զարգացման սկզբունքների ու փորձի օգտին: IACD- ն ունի ՄԱԿ-ի և նրա գործակալությունների խորհրդատուի կարգավիճակ:

Հոդվածների հրապարակումը

Մեր Practice Insights միջազգային ամսագիրը հրատարակվում է տարին երեք անգամ: Յուրաքանչյուր համարը նվիրված է համայնքի զարգացման հետ կապված կոնկրետ թեմայի: Եթե ցանկանում եք լրացուցիչ տեղեկություններ ստանալ կամ նպաստել հետագա հրատարակություններին, խնդրում ենք դիմել charlie.mcconnell@iacdglobal.org էլեկտրոնային հասցեով: Բացի այդ, IACD- ի անդամները կարող են ցանկացած ժամանակ նորություններ, դեպքերի ուսումնասիրություններ, հետազոտություններ կամ այլ նյութեր հրապարակել մեր ֆեյսբուկյան էջում և IACD-ի կայքում:

Միացեք մեզ

Ինչպես միանալ IACD- ին ՝ կարող եք մեր www.iacdglobal.org/join-us կայքում:

Առավելություններ մեր մասնակիցների համար՝

- ամենօրյա լուրերը համայնքի զարգացման միջազգային փորձի վերաբերյալ ֆեյսբուկում.
- Համայնքի զարգացման գլոբալ փոխանակման բանկի ռեսուրսների հասանելիություն IACD կայքում.
- Գործնական փոխանակման դասընթացների մասնակցելու հնարավորություն.
- զեղչեր՝ IACD- ի կոնֆերանսներին մասնակցելու դեպքում.
- IACD- ի «Համայնքների զարգացում» ամսագրի զեղչված բաժանորդագրություն.
- միջազգային լսարանի հետ ձեր աշխատանքով ու փորձով կիսվելու հնարավորություն մեր կայքի, Facebook- ի և այլ հրապարակումների միջոցով.
- մասնակիցները նաև հնարավորություն ունեն IACD- ի խորհրդում աշխատանքի համար առաջադրելու իրենց թեկնածությունը:

International Association for Community Development, Baltic Chambers, Suite 305,
50 Wellington Street, Glasgow G2 6HJ, Scotland, UK

+44 141 248 1924

Website: www.iacdglobal.org/

Facebook: www.facebook.com/IACDglobal

You can find out more about the Community Learning and Development Council, Scotland through its website:
http://cldstandardscouncil.org.uk

Translation into Armenian - Anahit Grigoryan / Inclusive Practices (Georgia)

Website: www.inclusivepractices.net

Facebook: www.facebook.com/inclusivepractices